Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 15-04-2021 թ. որոշմամբ
««ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ 23/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.969900
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2017-08-09
1.5 ՀՎՀՀ-ն		02270324
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55460898
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://quantum-alumni.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@quantum-alumni.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Վահագն Եղիկյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	1	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	10000	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Օժտված երեխաների կրթաթոշակ	6830581
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Օժտված երեխաների կրթաթոշակ	2380000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	2629656	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	2380000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 17 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Քվանտ» վարժարանի շրջանավարտների
Բարեգործական Հիմնադրամ

Ֆինանսական հաշվետվություններ և

Անկախ աուդիտորի եզրակացություն

2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
5	Հոգեբարձուների խորհրդի կազմ
6	Ֆինանսական հաշվետվություն
7	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
8	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
9	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամի գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Բարեգործական Հիմնադրամ
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Հիմնադրամի տնօրեն՝	Վահագն Եղիկյան

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամի հոգեբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամի (այսուհետ Հիմնադրամ) հատուկ նպատակի հիմունքի հանձայն պատրաստված ֆինանսական հաշվետվությունը (այսուհետ ֆինանսական հաշվետվություն), որը ներառում է «Օժտված երեխաների կրթաթոշակ» ծրագրի շրջանակներում ֆինանսական միջոցների ստացման և դրանց հաշվին կատարված կրթաթոշակների վճարման ծախսերը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտվող տարվա համար:

Մեր կարծիքով, «Օժտված երեխաների կրթաթոշակ» ծրագրով նախատեսված ստացված և օգտագործված ֆինանսական միջոցները բոլոր էական առումներով տալիս են ճշմարիտ և իրական պատկերը:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ 800/805) համապատասխան, համաձայն որոնց պետք է համապատասխանենք վարքագծի պահանջներին և աուդիտը պլանավորենք և անցկացնենք Ֆինանսական հաշվետվություն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի մեր պարտականությունները համաձայն այդ պահանջների:

Ստացված և օգտագործված ֆինանսական միջոցների վերաբերյալ աուդիտորական ապացույց ձեռք բերելու նպատակով աուդիտը ներառում է ընթացակարգերի իրականացում, որոնց ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ՝ էական խեղաթյուրման ռիսկերի գնահատումը, անկախ նրանից դրանք առաջացել են խարդախության կամ սխալի հետևանքով, թե ոչ: Ռիսկերը գնահատելիս աուդիտորը հաշվի է առնում Հիմնադրամի կողմից իրականացվող ներքին վերահսկողությունը՝ աուդիտի այն ընթացակարգերը պատրաստելու համար, որոնք տեղին են տվյալ պայմաններում, սակայն ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտո-րական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ստացված ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման և ներքին հսկողության համար:

Ղեկավարությունը պատասխանատու է նաև Հիմնադրամ անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ստացված ֆինանսական միջոցները արդյունավետ են օգտագործվել և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և

համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում

աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական

խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման լիազոր անձանց ներկայացնում ենք հաշվետվություն՝ անկախության էթիկական պահանջներին համապատասխան և հաղորդակցում ենք նրանց բոլոր փոխհարաբերությունների ու հարցերի վերաբերյալ, որոնք կարող են, ողջամտորեն ենթադրել, որ ազդում են մեր անկախության, և երբ այն կիրառել է՝ հարակից երաշխիքների վրա:

Կառավարման լիազոր անձանց հետ հաղորդակցված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք առավելագույն նշանակություն են ունեցել ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվության աուդիտի ընթացքում և, հետևաբար համարվում են աուդիտի հիմնական հարցերը: Մենք նկարագրում ենք այս հարցերը աուդիտորական եզրակացության մեջ, եթե օրենքը կամ կանոնակարգը թույլատրում է այդ հարցերի հրապարակային բացահայտումը կամ, երբ ծայրահեղ հազվադեպ դեպքերում մենք որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի եզրակացությունում, քանի որ դրանով անբարենպաստ հետևանքները կարող են գերակշռել հանրային շահի առավելությունները:

Հանգամանքների շեշտադրում

Առանց մեր եզրակացությունը ձևափոխելու, մենք ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքին, որ ֆինանսական հաշվետվությունը պատրաստված է օժանդակելու «Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամի ղեկավարներին՝ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի պահանջները բավարարելու համար: Հետևաբար, ֆինանսական հաշվետվությունը չի կարող կիրառվել այլ նպատակներով: Մեր եզրակացությունը նախատեսված է բացառապես «Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամի ղեկավարների համար, ուստի այն չպետք է բաշխվի այլ անձանց կամ օգտագործվի նրանց կողմից:

Տնօրեն Ա. Հարությունյան

Աուդիտոր Ս. Հովսեփյան

2021 թվականի հունիսի 24

«ԳԼՈԲ ԱՈՒԴԻՏ»
"GLOB AUDIT"
"ГЛОБ АУДИТ"
00131856

Հոգաբարձուների խորհրդի կազմ

Ժիրայր Ավետիսյան	Խորհրդի նախագահ
Մկրտիչ Սողոմոնյան	Խորհրդի անդամ
Սերգեյ Շահվերդյան	Խորհրդի անդամ
Մուրադ Թովմասյան	Խորհրդի անդամ
Արտավազդ Մինասյան	Խորհրդի անդամ

Ֆինանսական հաշվետվություն

Հազար դրամ

«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ հիմնադրամի 2020 թ. գործունեության մասին		
Հիմնադրամի՝		
Լրիվ անվանումը		«ՔՎԱՆՏ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ 23/2
Պետական գրանցման համարը		222.160.969900
Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		09.08.2017
ՀՎՀՀ-ն		02270324
Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)55460898
Պաշտոնական ինտերնետային կայքը		http://quantum-alumni.am/
Էլեկտրոնային փոստը		vahagn.yeghikyan@gmail.com
Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝ Քվանտ ՈՒԳԱԿ		
Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Կառավարչի անուն, ազգանուն՝ Վահագն Եղիկյան		
Անձեռնմխելի կապիտալի չափը		10
Ֆինանսավորման աղբյուրները՝	Ծրագրի անվանումը	Չափը
Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր	Օժտված երեխաների կրթաթոշակ	6,831
Իրականացված ծրագրերը՝		
Ծրագրի անվանումը		Ծախսված գումարը
Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը		2,629
Օժտված երեխաների կրթաթոշակ		2,380

Հիմնադրամի տնօրեն

Վահագն Եղիկյան

«Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամ
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2020թ. հազար դրամ	2019թ. հազար դրամ
Շնորհներից եկամուտ	4	2,650	1,415
Ծրագրային ծախսեր	5	(2,380)	(1,137)
Վարչական ծախսեր	6	(270)	(267)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)/զուտ		344	(11)
Արդյունք մինչև հարկումը		**344**	-
Շահութահարկի գծով ծախս		-	-
Տարվա զուտ արդյունք		**344**	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**344**	-

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 24-ին:

Հիմնադրամի տնօրեն Վահագն Եղիկյան

«Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2020թ.	2019թ.
		Հազար դրամ	Հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ	7	10,420	5,874
		10,420	**5,874**
Ընդամենը ակտիվներ		**10,420**	**5,874**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	8	10,017	5,836
Այլ ընթացիկ պարտավորություններ	9	49	28
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**10,066**	**5,864**
Ընդամենը պարտավորություններ		**10,066**	**5,864**
Սեփական կապիտալ			
Բաժնետիրական կապիտալ		10	10
Կուտակված շահույթ		344	-
Ընդամենը սեփական կապիտալ		**354**	**10**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**10,420**	**5,864**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 24-ին:

Հիմնադրամի տնօրեն Վահագն Եղիկյան

	2020թ. Հազար դրամ	2019թ. Հազար դրամ
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Դրամաշնորհներից մուտքեր	6,831	4,307
Ծրագրերի /կրթաթոշակ/ գծով վճարումներ	(2,380)	(1,337)
Աշխատավարձի գծով վճարում	(158)	(173)
Հարկերի և պարտադիր վճարների գծով վճարումներ	(61)	(29)
Այլ գործառնական ելքեր	(30)	(27)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ	**4,202**	**2,941**
Դրամական միջոցների զուտ աճ/(նվազում)	**4,202**	**2,941**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	344	(11)
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	5,874	-
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	**10,420**	**5,874**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2021թ. հունիսի 24-ին:

Հիմնադրամի տնօրեն Վահագն Եղիկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1	Ընդհանուր տեղեկատվություն	11
2	Պատրաստման հիմունքներ - հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական մոտեցումներ	14
3	Շնորհներից եկամուտներ	16
4	Ծրագրային ծախսեր/կրթաթոշակ	16
5	Վարչական ծախսեր	16
6	Դրամական միջոցներ	17
7	Եկամուտներին վերաբերվող շնորհներ	17
8	Այլ կրեդիտորական պարտքեր	17

1 Ընդհանուր տեղեկատվություն

«Քվանտ» վարժարանի շրջանավարտների Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ Հիմնադրամ) հիմնադրամի կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել և գործում է ՀՀ սահմանադրության, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ օրենք), ՀՀ միջազգային պայմանագրերի, սույն կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

Հիմնադրամի հիմնադիրն է «Քվանտ» ուսումնագիտական արտադրական կոոպերատիվը (հիմնադրված է Հայաստանի Հանրապետությունում, գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրի կողմից 10.02.1995 թվականին, գրանցման համար՝ 269.080.00384, ՀՎՀՀ՝ 02206356, գտնվելու վայրի հասցեն՝ 0046, ՀՀ, Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց 23/2, էլեկտրոնային փոստ՝ Info@Quantum.am):

Հիմնադրամի նպատակն է «Քվանտ» վարժարանի բարձր արդյունքներ և առաջադիմություն ցուցաբերող աշակերտներին կրթաթոշակների և այլ միջոցներով նյութական աջակցության ցուցաբերումը: Հիմնադրամն ունի բարեգործական բնույթ և իր գործունեության նպատակներին հասնում է շրջանավարատների և ցանկացած այլ շահագրգիռ անձանց և կազմակերպությունների (գործող ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում) նվիրատվությունների կազմակերպված հավաքագրման միջոցով:

«Քվանտ» Հիմնադրամի բարձրագույն մարմինը Հիմնադրամի հոգեբարձուների Խորհուրդն է, իսկ գործադիր մարմինը՝ Հիմադրամի տնօրենը: Հիմնադրամի տնօրենն է հանդիսանում Վահագն Եղիկյանը:

Հիմնադրամի հասցեն է՝ 0046, ՀՀ, Երևան, Շենգավիթ, Բագրատունյաց 23/2, էլեկտրոնային փոստ՝ legal@quantum-alumni.am:

Աուդիտի աուդիտի նպատակներն ու շրջանակը

Աուդիտի նպատակը շրջանավարատների և ցանկացած այլ շահագրգիռ անձանց և կազմակերպությունների (գործող ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում) նվիրատվությունների կազմակերպված հավաքագրման միջոցով հավաքագրված, հիմնադրամի կողմից կառավարվող և օգտագործվող ֆինանսական ռեսուրսների աուդիտ անցկացնելն է՝ համաձայն իր կանոնադրությամբ սահմանված դրույթների և գործող օրենքների և կանոնակարգերի:

Հիմնադրամի ֆինանսական ռեսուրսների աուդիտի առանձնահատուկ նպատակներն են.

- հավաստիացում այն մասին, թե արդյոք Ֆինանսական հաշվետվությունը ներկայացված է ճշմարիտ, ստացված եկամուտները և ծախսերը ճիշտ են տեղաբաշխվել՝ համաձայն ԱՄՍ800/805-ի,
- հավաստիացում ռիսկերի գնահատման վերաբերյալ՝ համաձայն ԱՄՍ315-ի,

Գնահատել և բավարար պատկերացում կազմել Հիմնադրամի ներքին հսկողության կառուցվածքի վերաբերյալ, գնահատել հսկողության ռիսկը՝ ներառյալ ներքին հսկողության կառուցվածքի թույլ կողմերը: Այս հասկացողությունը ներառում է հաշվի առնելով այն մեթոդները, որոնք կազմակերպությունն օգտագործում է հաշվապահական հաշվառման տեղեկատվությունը մշակելու համար, քանի որ նման մեթոդները ազդում են ներքին հսկողության ձևավորման վրա:

- Կատարել թեստեր՝ պարզելու, թե արդյոք Հիմնադրամի գործունեությունը, բոլոր առումներով, համապատասխանել է գործող օրենքներին և կանոնակարգերին:

Աուդիտի շրջանակ

Մենք աուդիտը իրականացնելու համար անհրաժեշտ ենք համարել ուսումնասիրել.

1. ծրագրի բյուջեն;
2. ֆինանսավորման աղբյուրները, շահառուների ցանկը;
3. կրթաթոշակների նշանակման սկզբունքը;
4. բանկային վճարումները;
5. հաշվապահական և այլ փաստաթղթերը:

Հաշվետվության արժույթը Հայկական դրամն է:

Աուդիտի ընթացակարգերը ներառում են.

- Հիմնադրամի գործունեության հետ կապված տեղեկատվության ուսումնասիրություն;
- կրթաթոշակների նշանակման համապատասխանություն ըստ կանոնադրությամբ ամրագրված չափանիշների;
- ֆինանսավորման նպատակայնությունը;
- ծախսերի համապատասխան փաստաթղթերով ապահովվածության ստուգում;
- բանկային գործառնությունների համապատասխանության ստուգում:

Մեր աուդիտի ընթացքում մենք պարզեցինք, որ.

- ✓ ներքին հսկողության համակարգը հուսալի է;
- ✓ կրթաթոշակների նշանակվում են կանոնադրությամբ ամրագրված չափանիշների համաձայն;
- ✓ կենսաթոշակները հասնում են անմիջապես շահառուներին կամ նրանց լիազոր անձանց միջոցով, որոնց անձնական տվյալները հաստատված են Հիմնադրամի հիմնադրի կողմից;
- ✓ բոլոր ֆինանսական գործարքները իրականացվում են գործող օրենսդրության և կանոնակարգերի համաձայն:

Ֆինանսավորում և կատարում

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական միջոցները կազմել են 5,874 հազար դրամ:

2020 թվականի ընթացքում Հիմնադրամի ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 6,831 հազար դրամ, տես Աղյուսակ 1.

Աղյուսակ 1

Հազար դրամ

Ֆինանսավորող	**Գումար**
Եղիկյան Վահագն Ռուբենի	158
Կարապետյան Մարտուն Միքայելի	100
Մադոյան Կառլեն Կարենի	100
Մինասյան Արտավազդ Բաբկենի	300
Սողոմոնյան Մկրտիչ	700
Շահվերդյան Դավիթ	400
Պետրոսյան Տիգրան Ալբերտի	250
Սարգսյան Սեյրան	1,448
ՔՎԱՆՏ վարժարանի շրջանավարտների ԲՀ	177
Մուսոյան Վահե	3,198
Ընդամենը	**6,831**

2020 թվականի ընթացքում Հիմնադրամի ընդհանուր ծախսերը կազմել են 2,629 հազար դրամ, տես Աղյուսակ 2.

Աղյուսակ 2

Հազար դրամ

Ծախսային հոդվածներ	**Գումար**
Կրթաթոշակ	2,380
Աշխատավարձ	158
Հարկեր և այլ պարտադիր վճարներ	61
Բանկային ծախսեր	30
Ընդամենը	**2,629**

2020 թվականի ընթացքում Հիմնադրամի կրթաթոշակառուների ցանկը և նրանց կատարված վճարումները կազմել են 2,380 հազար դրամ, տես Աղյուսակ 3.

Աղյուսակ 3

Հազար դրամ

Կրթաթոշակառուներ	**Գումար**
Համլետ Պետրոսյան	260
Գրիգորյան Ալեքսի	80
Արզումանյան Լորետա	260
Բաբուջյան Վահե	320
Գրիգորյան Վահագն	260
Խալաթյան Արա	260

Ալեքսանյան Կարեն	260
Սաղեյան Սոնա	260
Պարզյան Ռազմիկ	260
Վարդանյան Մանե	80
Սահրադյան Վահե	80
Ընդամենը	**2,380**

Մինչև 2020 թվականը կրթաթոշակառուների քանակը եղել է յոթը: 2020 թվականին ավելացել են ևս չորս կրթաթոշակառու և տարվա վերջում նրանց թիվը հասել տասնմեկի:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական միջոցները կազմել են 10,420 հազար դրամ:

2 Պատրաստման հիմունքներ-հաշվապահական քաղաքականության հիմնական մոտեցումներ

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների օգտագործում

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար Ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված տվյալ օրվա միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ.
ա) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվում են (վերահաշվարկվում են)՝ կիրառելով փակման (հաշվետու ամսաթվի) փոխարժեքը,
բ) արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները, որոնք հաշվառվում են սկզբնական արժեքով, ներկայացվում են գործարքի օրվա փոխարժեքով:
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը, որոնք առաջանում են արտարժույթով գործարքների մարման կամ հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով դրամային հոդվածների վերագնահատման արդյունքում, ճանաչվում են ֆինանսական արդյունքում:

Ֆինանսական գործիքներ

Կազմակերպությունում առկա են հետևյալ ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները.

- առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր,
- դրամական միջոցներ և համարժեքներ:

Շնորհներ

Ընկերությունը որպես շնորհ հաշվառում է հիմնադիրներից, տեղական և միջազգային կազմակերպություններից ստացված միջոցները, որոնք ճանաչվում և չափվում են իրական արժեքով:

Կազմակերպությունը պետական շնորհները պետք է ճանաչի հետևյալ կերպ՝

ա) շնորհը, որը ստացողի համար չի սահմանում որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում, երբ շնորհի գծով մուտքերը ստացման ենթակա են.

բ) շնորհը, որը ստացողի համար սահմանում է որոշակի ապագա պայմանների կատարում, ճանաչվում է եկամտում միայն, երբ պայմանների կատարումը բավարարվում է.

գ) ստացված շնորհները, նախքան **հասույթի ճանաչման** չափանիշները բավարարելը, ճանաչվում են որպես **պարտավորություն**:

Կազմակերպությունը շնորհները պետք է չափի ստացված կամ ստացվելիք **ակտիվի իրական արժեքով**:

Կազմակերպությունը շնորհների վերաբերյալ պետք է բացահայտի **ֆինանսական հաշվետվություններում** ճանաչված պետական շնորհների բնույթը, գումարները և որպես եկամուտ չճանաչված պետական շնորհներին կցված և չկատարված պայմանները և այլ պայմանականություններ:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, Ընկերությունը, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որոնք ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչում է՝

ա) որպես պարտավորություն՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Ընկերությունը ճանաչում է այդ տարբերությունը որպես ակտիվ՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի, և

բ) որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ՖՀՄՍ-ներով պահանջվում կամ թույլատրվում է հատուցումների գումարը ներառել մեկ այլ ակտիվի արժեքի մեջ (օրինակ, պաշարների, հիմնական միջոցների դեպքում):

Ընկերությունը փոխհատուցելի բացակայությունների ձևով աշխատակիցների հատուցումների ակնկալվող ծախսումները ճանաչում է՝

ա) կուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ տարեկան արձակուրդը)՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա փոխհատուցելի բացակայությունների նկատմամբ, և

բ) չկուտակվող փոխհատուցելի բացակայությունների դեպքում (օրինակ՝ ժամանակավոր անաշխատունակությունը)՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափում է որպես լրացուցիչ գումար, որը Ընկերությունը ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք: Ընդ որում այդ հաշվարկներում ներառվում է նաև պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասը:

4. Շնորհներից եկամուտ

	2020	2019
Եկամուտներին վերաբերվող շնորհներից	2,650	1,415
	2,650	**1,415**

5. Ծրագրային ծախսեր/Կրթաթոշակ

	2020	2019
Կրթաթոշակ	2,380	1,137
	2,380	**1,337**

Ծրագրային ծախսերը /Կրթաթոշակ/ ամբողջությամբ տրվում են ՀՀ տարածքում:

6. Վարչական ծախսեր

	2020	2019
Աշխատակիցներին հատուցումների գծով	240	240
Բանկային ծախսերի գծով	30	27
	2,650	**1,404**

7. Դրամական միջոցներ

	2020	2019
Բանկային հաշիվներ ՀՀ դրամով	3,005	2,177
Բանկային հաշիվներ արտարժույթով	7,415	3,697
	10,420	**5,874**

Դրամական միջոցները պահվում են ՀՀ առևտրային բանկերում:

8. Եկամուտներին վերաբերվող շնորհներ

	2020	2019
Մնացորդը տարեսկզբին	**5,836**	**2,944**
Ստացված դրամաշնորհներ՝ դրամով	6,831	4.307
Ստացված դրամաշնորհներ՝ գույքով	-	-
Շնորհից եկամտի ճանաչում	(2,650)	(1,415)
Մնացորդը տարեվերջին	**10,017**	**5,836**

9. Այլ կրեդիտորական պարտքեր

	2020	2019
Աշխատավարձի գծով	14	-
Հարկերի գծով	-	5
Այլ	35	23
	49	**28**

Առանցքային կառավարչական անձնակազմին հատուցումներ

Առանցքային կառավարչական անձնակազմին կարճաժամկետ հատուցումները (աշխատավարձ) 2020թ. կազմել է 240 հազար դրամ, 2019թ.՝ 240 հազար դրամ: Առանցքային կառավարչական անձնակազմին այլ հատուցումներ չեն եղել:

Ֆինանսական հաշվետվությունների վավերացում

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2021թ. հունիսի 24-ին՝ տնօրեն Վահագն Եղիկյանի կողմից:

Հիմնադրամի տնօրեն Վահագն Եղիկյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 26.08.2021 14:31